Հոգևոր Տէրը հաճեցաւ սեղանակից լինել Մ. Աթոռի միաբանութեան։

Ամսիս 15-ին Վեհ. Հայրապետի անուանակոչութեան առթիւ պատարագից յետոյ Մ. Տաճարում հայրապետական մաղթանք կատարուեց. Միաբանութիւնը և Ճեմարանի ուսուցչական խումբը շնորհաւորեցաւ Եկեղեցու մէջ համբուրելու Նորին սրբութեան աջը։ Կէս օրին հացկերոյթ տրուեցաւ վանքի սեղանատան մէջ. հացկերոյթին ներկայ էին Մ. Աթոռի միաբանութիւնը, Ճեմարանի ուսուցչական և աշակերտներից երգեցիկ խումբը. ներկայ էին նաև բազմաթիւ հիւրեր Երևանից և Վաղարշապատից։ Յատկապէս Ս. Հայրապետի անուանակոչութեան առթիւ Մ. Աթոռ էին եկել և հացկերոյթին ներկայ եղան նաև Երևանի փոխանորդ Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան և թեմական դպրանոցի տեսուչ Արժ. Բենիկ վրդ. և հոգաբարձութեան երկու ներկայացուցիչներ։ Արժ. Աշոտ վրդ. Շախեանց բացատրելով Ն. Վեհափառութեան մեծամեծ արժանիքները՝ բաժակ առաջարկեց Նորա կենաց երկարութեան համար։ Արժ. Բենիկ վրդ. առաջարկեց ամբողջ միաբանութեան, իսկ Գեր. Սուքիաս արքեպս. Հայոց հոգևոր հաստատութեանց վարիչների և ընդհանուր հոգևորականութեան կենացը։ Երգեցիկ խումբը Ս. Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ երգեց աքանչելի ներդաշնակութեամբ առաջարկուած կենացներին պատշաճ քառաձայն երգեր։

Գեր. Մակար եպս. Բարխուդարեան Ն. Ս. Օծութեան առաջարկութեան համաձայն հաստատուած է Սինոդի անդամ։ Իւր այս նոր պաշտօնի պատճառաւ Գեր. Մակար եպս. հրաժարուելով աւագ լուսարարութեան պաշտօնից, Վեհ. Հայրապետը բարեհաճեց նրա տեղ Մ. Աթոռի աւագ լուսարար նշանակել ժամօրհնող բարձր. Ղևոնդ վարդապետին։

Գէորգ. Ճեմարանի տեսուչ բարձր. Կարապետ վարդապետ իւր տեսչական պաշտօնի ծանրութեան պատճառաւ հրաժարուած լինելով Արարատի խմբագրութիւնից, Վեհ. Հայրապետը բարեհաճեց խմբագիր նշանակել բարձր. Գարեգին վրդ. Յովսէփեանին։

Ծննդեան տօնի առթիւ Մ. Աթոռի միաբաններից Արժ. Պետրոս վրդ. ուղարկուեց Բայազիդ քարոզելու և մխիթարելու համարնոյն տեղի ժողովուրդը։ Իսկ Տ. Գարեգին վարդ. Յովսէփեան Հոգևոր Տիրոջ հրամանով ջրօրհնեաց հանդէս կատարեց Վաղարշապատի եկեղեցում և այդ առթիւ քարոզ խօսեց։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Դեկտեմբերի վերջին Մ. Աթոռ ժամանեց Գէորգեան Ժառանգաւորաց Ճեմարանի լսարանական բաժնի յունարէնի ուսուցիչ պր. Յակոբ Մանանդեան, որ իւր ուսումն աւարտել է արտասահմանում և կրկին քննութիւն տուել Ռուսաստանում։ Պարոնը տօներից յետոյ սկսել է արդէն իւր դասերը։

Ախալքալակի երկրաշարժից արկածեալների համար հանգանակութիւն կատարուելով Ճեմարանի ուսուցչական խմբի մէջ, գոյացած արդիւնքը յանձնուեցաւ տեղւոյս պր. Գաւառապետին։

Ս. Հայրապետի բարեհաճ կոնդակով Ճեմարանի լսարանական բաժնի նախկին ուսուցիչ պր. Յովհաննէս Յովհաննիսեանը Ճեմարանի տեսչի օգնական նշանակուեց։

Վեհ. Հայրապետի անուանակոչութեան տօնի երեկոյին Ճեմարանի հանդիսարանում տեղի ունեցաւ մի զրական—երաժշտական երեկոյթ, որի ներկայ էին Գեր. Սուքիաս արք. եպս., Սինոդի նախանդամ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոս, Երևանի թեմական դպրանոցի տեսուչ Արժ. Բենիկ վարդ. և Մայր Աթոռի միաբանութիւնից շատեր և Ճեմարանի ուսուցչական խումբը։ Ճեմարանի Տեսուչ բարձր. Կարապետ վարդապետի բացման ճառից յետոյ

կարդացուեցան մի քանի ճառեր ուսանողների կողմից, երգուեցան նաև մի քանի քառաձայն երգեր Ճեմարանի երաժիշտ ուսուցիչ բարձր. Տ. Կոմիտաս վարդապետի պատրաստած։ Բոլորից յետոյ բեմ բարձրացաւ Ն. Վեհափառութեան դիւանապետ բարձր. Կորիւն վարդապետ և հանդիսականներին հաղորդեց Ն. Վեհափառութեան երկու ուրախալի շնորհները. մին վարդապետական ականակուռ լանջախաչի շնորհը Մ. Տաճարի դպրապետ բարձր. Կոմիտաս վարդապետին՝ ի խրախոյս իւր եռանդուն աշխատութեան. Դիւանապետ հայր սուրբը կարդաց այս առթիւ Ն. Վեհափառութեան շնորհած սրբատառ կոնդակը, որ հանդիսականները լսեցին յոտնկայս։ Երկրորդը՝ Ն. Վեհափառութեան այն շնորհը, որով բարեհաճել է Ճեմարանի լսարանական բաժնի նախկին ուսուցիչ պր. Ց. Յովհաննիսեանին նշանակել օգնական տեսուչ։—Հանդէսը փակուեց Դեր. Սուքիաս սրբազանի օրհնութեամբ և աղօթքով։

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄ.

ԱԽԱԼՔԱԼԱԿԻ ԳԵՒՈՐԻ ԵՂԻՑԸ.

Անցեալ համարում արդէն առիթ ունեցանք գուժելու Ախալքալակի գաւառում պատահած երկրաշարժի յառաջ բերած աղէտը. միևնոյն ժամանակ յայտնեցինք Ն. Սրբութեան տնօրինութիւններն այդ մասին։ Հոգևոր Տէրը № 1551 կոնդակով հրամայում է բոլոր թեմական առաջնորդներին ժողովարարութիւններ անել և հարուստ եկեղեցիներից նպաստներ հասցնել երկրաշարժից վնասուած դրժբախտ գիւղացիներին։ Իսկ Իւր կողմից Թիֆլիսի թեմի եկամուտներից նշանակել է 1000 ր։ Առանձին կոնդակով յորդորեց նաև Ալէքսանդրապոլի բարեպաշտ ժողովրդին հանգանակութիւն սկսել Արժ. Տ. Մատթէոս վարդապետի առաջնորդութեամբ։ Հ. փոխանորդի տուած տեղեկութեան համաձայն՝ ժողովրդից հաւաքուած է 500 ր. իսկ ս. Աստուածածնայ պատկերի եկամուտից Հոգևոր Պետի հրամանով յատկացուել է դարձեալ 200 ր։ Այս գումարը և հետզհետէ նոյն յաջորդութեան մէջ հաւաքուած նուէրները Վեհափառ Հայրապետի հրամանով տեղ պիտի հասցնէ Հ. Մատթէոսը և առանձին տեղեկագիր պատրաստէ արկածեալների վիճակի մասին Նորին Վեհափառութեան մատուցանելու համար։

Երկրաշարժից վնասուածների օգտին հանգանակութիւններ կատարուեցան Մ. Աթոռի միաբանների և Ժառանգաւորաց Հոգևոր Ճեմարանի ուսուցիչների մէջ։

Լրագիրների տուած տեղեկութեանց համեմատ արկածեալների օգտին մինչև այժմ հաւաքուած է մօտ 120,000 ռուբլի, բայց այդքանը քիչ է աղէտի մեծութիւնը աչքի առաջ ունենալով։ Մեծ գումարներով նուիրաբերողներն են.

1) Ն. Կայսերական Մեծութիւն Թագաւորը Կայսրը 50,000 ր.
2) Կովկասի Տ. Կառավարչապետը 3000 ր.
3) Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ 1000 ր.
4) Ամենայն Հայոց Հայրապետը 1000 ր. *

Մնացածը հաւաքուել է առևտրական և բանկային ընկերութիւնների տուած նուէրներից, ռուս և հայ լրագիրների բաց արած հանգանակութիւններից և մասնաւոր նուիրատուութիւններից։ Ուշադրութեան արժանի են յատկապէս «Тифлисскій Листокъ» և «Մշակ» լրագիրների ժողովարարութիւնը։ Մինչև յուն. 18-ը Մշակը հանգանակել է 18,146 ր. 35½ կ.

Թիֆլիսում կազմուած է կետրոնական յանձնաժողով նուէրներ հաւաքելու և գործադրելու համար նախագահութեամբ Թիֆլ. Սահմանգապետի պաշտօնակատար գնդապետ Սվեչինի։ Յանձնաժողովի գանձապահ ընտրուած է Ալ. Մանթաշեան։ Գործադիր յանձնաժողով է կազմուած նաև Ախալքալակում՝

---

* Եկեղեցիներից նշանակուած նպաստների քանակութիւնը դեռ հայտնի չէ մեզ։